

նարանի աշակերտք գեղեցիկ երգերով զուարճացուցին և մխիթարեցին ժողովուրդը: Աւ այս հանդէսը տեւեց մինչև ասիական ժամ 4. և վերջացաւ մեծ յիշատակ և մխիթարութիւն թողլով Տփլիսաբնակ եռանդուն Ազգայնոց սրտից մէջ:



ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՒ ՄԵՎ ՔԱԼԱՆԱՅԱԳԵՏ.

Երջանիկ է օրս, յորում վիճակեցաւ ինձ նուազաբար, ի կողմանէ մեր ամենեցուն կլանել ի հանդէս բանախօսութեան՝ առ ի շնորհաւորել զերկուս սիրալի տօնս. զերկրորդ Ծաղկազարդն ասեմ, և զերրորդ տարեդարձ սուրբ Օծման Զերդ Անհախառութեանս Երջանիկ է քաղաքս մեր, որ յայս առաջին սուազ արժանացաւ հաղորդ գտանիկ այսմ շքեղահանդէս տօնակատարութեան, և մնացե է այս յաւերժական յիշատակ ի սիրտս Թիֆլիզարնակ Հայոց:

Հրաշափառադոյն է տօնս և բերկրապատար խընդութիւն մեր—Երկնային զօրութիւնք, ըստ ականդութեան վերանորոգողի առաքելական Աթոռոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ, տօննն զտարեգարձ մուտ գործելոյ մշտնջնաւոր Քահանայապետին յաղթական փառօք ի յերկինս, և մեք երկրայինքս կից ընդ նոսին տօնեղով զայն՝ տօնեմք և զտարեդարձ Օծման Քահանայապետի մեծի բազմեղոյ ի Գահ սրբազան Առաքելոցն Քաղզէի և Բարբուղլանայ, և առաքելաարաս յաջորդի նոցա Գրիգորի մեծի Պարթևի մերս Աուսաւորչաց:

Ներեցէք ինձ, Հոգւոր տէր, գեղեցիկ իմն յանդնութեամբ շոտքիկ աստ զտակաւ ինչ բանս, ոչ ի ցոյց խրատու, այլ նա ի բերել ի հանդէս զ ի Զէնջ սկսեալ և զսկաննել արդիւնաւոր գործըս վասն յառաջադիմութեան ազգիս, և բարեկարգութեան սրբոյ Եկեղեցւոյ:

Նախախնամութիւնն վերին, որ անքուն ակամբ պահէ զյինքննէ հիմնարկեալ ուղղափառ Եկեղեցին Հայաստանեայց, յարուցեալ է ըստ յառաջադոյն ընտրութեան իւրում զքաջարթուն և

զանձնաղիր Հովիւս ի շինութիւն Սրբոյ Եկեղեցւոյ, և ի պաշտպանութիւն ամբիժ Հաւատոյ. նա ինքն յառաջադոյն ընտրեաց զԶեղ յայն պաշտօն և կացոյց Տեսուչ ի վերայ փոքու. Հօտին իւրոյ. "վասն որոյ էօժ զՔեղ Աստուած, Աստուած քո իւղով ուրախութեան, առաւել քան զընկերս քո" (Սաղմ. 107. 9), և լցոյց շնորհք սուրբ Հոգւոյն. զի յայսմ, մեծի և ծանր պաշտման, որ բազում հոգոց պէտս ունի, առաջնորդեցէ Զեղ առ կատարումն ամենայն բարի ցանկութեանց լըրութեան ազգիս:

Արդարև, օժանդակութեամբ Աստուածային Տեսչութեան, յօրէ գահակալութեան Զերոյ, զառաջին և զամենալսեմ պարտս համարեցիք բանալ զուսումնարանս վասն երկուց սեռից հայացի մանկտեաց, յարուցանել ի մեռելութենէ զտպարանն Սրբոյ Էջմիածնի, և ձեռն արկանել ի զանազան շինութիւնս, որք կենդանի վկայք են գործունեայ հոգատարութեանց Զերոց. այլ այս ամենայն սկիզբն է երկանց. զի սպասեն Զեղ այլ ևս բազմադիմի ազգային գործք, որոց գուցէ ընդ առաջ կցնն արգելք ինչ. բայց Անհախառութիւն Զեր, ի բանս Սրբոյն Պաւղոսի զրով վարժեալ ի մանկութենէ չունիք վհատել. "Զի ոչ ետ Զեղ Աստուած զհոգի վհատութեան, այլ զօրութեան, և սիրոյ, և զդատութեան, (2 Տիմ. Ա. 7). և յայնժամ ամենայն ինչ ունի յառաջ խաղալ ի լուանդր:

Երկից իրաց պէտս ունիմք՝ շինութեան և բարեկարգութեան Եկեղեցւոյ ի վերայ սկզբնական հիմանց իւրոց, բարեկարգութեան հոգևորականաց, և հիմնելոյ զուսումնարանս, ուր զոն պակասութիւնք, և զեղեալն որչափ մարթ է, ըստ ներկոյ միջոցաց պահպանել և կանոնաւորել, զի այս վերջինս է միակ ճանապարհ լուսաւորութեան և յառաջընթացութեան ներկայ և ապագայ սերունդոց մերոց. սակաւ ձեռնանել զբարեկիրթ անդամս ազգիս սակարէ պահպանել զկարգ յեկեղեցիս, ի Հոգւորականս և ի ժողովրդականս Աասն որոյ Օծեալք Աստուծոյ, զսկզբնաւորեալսդ կատարելագործեալ, մինչ օր կայ. "զի ընդ Քեզ է սկզբն աւուր զօրութեանս" (Սաղմ. 36. 4), և զոր ունիսդ ի գաղափարի՝ սկսեալ, զի "յերեսաց քոց իրաւունք մեզ ելցեն, և աչք մեր տեսցեն զուղբութիւնս". (Սաղմ. 82. 2):

Անբերով զբանս՝ մեր համախմբեալքս առաջի
 Գլխոյդ Ազգիս, շնորհաւորեմք զտօն մուտ գործելոյ
 երկնաւոր Քահանայապետին յիւր Աստուածային
 Աթոռ, և զտօն համբառնալոյ Ձերոյ յառաքելա-
 կան Աթոռ մեծի Քահանայապետութեան Հայոց,
 և ընդ նմին վերախնկեմք զաղօթս առ բարձրեալն
 Աստուած՝ երկարել զկեանս Ձերոյ Աւհաստու-
 թեան վասն կատարելագործելոյ զսկսեալ ՚ի Ձէնջ
 ազգաշահ գործս, հաստատուն պահել զՄայրս մեր
 Սուրբ Վաթողիկէ Էջմիածին մինչ ցկատարած աշ-
 խարհք և զցրուեալ ազգս Հայոց ՚ի վերայ երե-
 սաց երկրի ՚ի մի յօդ զուրից ընդ հովանաւորու-
 թեամբ մօրն Լուսոյ Արքայ Էջմիածնի, և ընդ միով
 հայրապետական զաւագանաւ: Տէր պահեցէ ըզ-
 մուտ և զել քո յայսմ հետէ մինչև յախտեան .
 Ամէն:

Ստեփաննոս առաջ Բահանայ Մանդի-
 նեանց, ուսուցիչ Կրօնագիտութեան եւ
 Եկեղեցական պատմութեան Ներսիսեան
 Հոգեւոր եւ Ազգային Գարոյն:

է 24 Մայիս 1870 -ի .
 ի Տ փ խ ի ս :

ՎԵՀԱՓՍՈՒ ՀԱՅՐ

Բարեպաշտ կրօնաւոր մի կամենում էր խօսք
 ասել նորան սպասող ժողովրդին: Մարդկային
 չքաւորութեան խորին զգացմամբ շարժված կրօ-
 նաւորն աղաղակեց. "Բարեկամներ, եկէք լաց լի-
 նինք": և ամենքը ընկան գետին և արտասուք թա-
 փեցին:

Երբ ես առաջ կանգնեցի այստեղ, գիտեմ որ
 բարեպաշտութեամբ և Հայրասիրութեամբ լըց-
 ված այս ժողովուրդը՝ սպասում է ինձանից այս
 հանդէսին յարմարաւոր խօսք: Բայց իմ շքերանքս
 ահամայ փակվում են, երբ տեսնում եմ այստեղ
 կանգնած իմ Տէրը, Հայկական Ազգի Աւհաստու
 Վաթողիկոսը, Հայկական Ազգի ցանկութիւններ
 և նպատակներ մի Աւհ և Փառաւոր անձի
 մէջ ամփոփված: Ո՞վ կհամարձակէ երկարաբա-
 նել, երբ կանգնած է Աւհաստու Գէորգ Գ. Վա-
 թողիկոսը՝ իւր Ազգաշէն գործերը և նպատակնե-

րը Աւհ ճակատին դրօշմած: Գոնէ ես տկարա-
 նում եմ: Եւ ինչ կարելի էր ասել այս Հայրա-
 սէր ժողովրդին, որը հարիւր անգամ ասելի հզօր
 կերպով չվկայէր այս հրաշափառ հանդէսը:

Ահա հաւաքվել է Թիֆլիսի բոլոր Հայասէր և
 լուսազոյն ժողովուրդը: Բարեհաճեցէք նայել, Աւ-
 հաստու Հայր, իւրաքանչիւրի երեսին. միտիժա-
 րութեան բազմապայտ զգացմունքը դուրս են թըռ-
 չում սրտերից: Նայեցէք իւրաքանչիւրը մարմնա-
 ցած ուրախութիւն դարձած է: Եւ սա ի՞նչ բաղդ
 է Թիֆլիսի համար. այսօր Հայկական Ազգի Վա-
 թողիկոս Աւհաստու Գէորգը տօնում է իւր
 սուրբ Օծութեան օրը Թիֆլիսի ժողովրդի հետ:
 Նախանձեցէք ուրեմն Թիֆլիսցիներին դուք, Թիւր-
 քիարնակ Հայեր. դուք Հնդկաբնակ, Պարսկա-
 բնակ Հայեր, և դուք՝ ամենայն Հայեր: Թիֆլիսը
 փառաւորվում է այսօր Աւհաստու Վաթողիկոսի
 մեծ փառքով, Հայր, Ազգի Հայր, մեր սէրը զէպի
 Ազգը անպատում է, ուրեմն ինչպէս յայտնեմ
 խօսքով մեր իրբեւ Ովկիանոս լայնատարած թէրը
 զէպի մեր Աւհաստու Հայրապետը: Եւ եթէ չկայ
 ոք մին, որ չէ շարժվում այս հրաշափառ տեսա-
 բանից, նրան կշարժէ մի թէ մարդկային թոյլ
 խօսքը:

Եւ ահա մեր Վաթողիկոսը Թագադրված և Օծ-
 ված, Հայր, Թագը Ձեր Գլխի վերայ մեզ փառք
 է, իսկ Ձեզ — քաջագործութիւն: Այդ Գաւազա-
 նը, որ կարօղ է կրել Հայկական Վաթողիկոսի
 հզօր Ձեռը միայն, մեր Եկեղեցուն անդորրութիւն
 է, իսկ Ձեզ — հսկողութիւն: Եւ բոլոր հիանալի
 զարդերդ մեզ միտիժարութիւն են, իսկ Ձեզ —
 բեռնաւորութիւն:

Բեռնաւորութիւն արդարեւ և քաջագործու-
 թիւն: Եւ վայել է Ձեր իմաստութեանը աշխար-
 հիս հնազոյն Եկեղեցւոյ Հայրապետութիւն, որ
 երկնքի և երկրի Գառաւորի ձայնով կդատէք և
 կանտորինէք արդարութեամբ և իմաստութեամբ,
 ոչինչ խտտորելով աջ կամ ահեակ:

Իսկ սուրբ Օծումդ, մի թէ միայն արտաքին
 հասարակ արարողութիւն էր: Ոչ, ամենևին ոչ,
 երբ Գաւիթը Աստուծոց Թագաւոր ընտրվեցաւ
 Իսրայէլին և սուրբ իւղով օձվեցաւ, որովհետեւ
 "կարմիր էր դէմքով, գեղեցիկ աչքերով և սիրուն